Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ռոյալթիներից համայնքներին հատկացվող մասհանումների վերաբերյալ 2023թ. մայիսի 4-6-ը կայացած դասընթաց-աշխատաժողովի արդյունքների վերաբերյալ

<u>Աշխատաժողովի մասնակիցներ՝</u>

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) ԲՇԽ-ի անդամներ՝

Հովհաննես Հարությունյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Նազելի Վարդանյան	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ-ի տնօրեն
Սուրեն Ներսեսյան	Երևանի պետական համալսարանի օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ

ՎԱ ԱՃԹՆ-ի քարտուղարություն՝

Լուսինե Թովմասյան	քարտուղարության ղեկավար
Հասմիկ Մանուկյան	քարտուղարության փորձագետ
Արմինե Այվազյան	քարտուղարության գնումների մասնագետ

Վարչապետի աշխատակազմ՝

Տաճատ Հովհաննիսյան	Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի հարցերի վարչության գլխավոր մասնագետ
Աշոտ Ծորմուտյան	Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Լիազոր մարմինների ներկայացուցիչներ՝

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Կարեն Գասպարյան	ընդերքի վարչության պետի պարտականությունները կատարող
Սեդա Հակոբյան	ընդերքի վարչության ընդերքօգտագործման ոլորտի քաղաքականության մշակման բաժնի գլխավոր մասնագետ, բաժնի պետի պաշտոնակատար

Նաիրա Բարսեղյան	ընդերքի վարչության ընդերքօգտագործման ոլորտի քաղաքականության մշակման բաժնի գլխավոր մասնագետ
Արմինե Ստեփանյան	ընդերքի վարչության ընդերքօգտագործման ոլորտի քաղաքականության մշակման բաժնի ավագ մասնագետ
Լորիս Մուրադյան	ֆինանսական, հաշվապահական հաշվառման և համայնքային բյուջեների վարչության համայնքային բյուջեների բաժնի պետ
Զավեն Մկրտչյան	վարչական վերահսկողության վարչության վարչական վերահսկողության իրականացման բաժնի պետ

Ֆինանսների նախարարություն

Էդուարդ Բաղդասարյան	բյուջետային գործընթացի համակարգման վարչության բյուջետային գործընթացի վերլուծական մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ

Շրջակա միջավայրի նախարարություն

Արթուր Ղավալյան	ռազմավարական քաղաքականության վարչության պետի տեղակալ

Սյունիքի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերի մարզպետարանների և համայնքապետարանների ներկայացուցիչներ՝

Սամվել Խառատյան	Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ
Արթուր Վարդումյան	Ալավերդու համայնքապետարան, Համայնքի ղեկավարի օգնական
Ժորա Զարգարյան	Ալավերդու համայնքապետարան, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ
Գարիկ Հոբոսյան	Ալավերդու համայնքապետարան,Շնող բնակավայրի վարչական ղեկավար
Արթուր Աղաբաբյան	Ալավերդու համայնքապետարան, Շամլուղ բնակավայրի վարչական ղեկավար
Հայկ Կարախանյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ
Հասմիկ Գրիգորյան	Մեղրիի համայնքապետարան, Կազմակերպական բաժնի պետ
Զինա Հովհաննիսյան	Մեղրի / Ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ
Աննա Նավասարդյան	Մեղրի / Աշխատակազմի քարտուղար
Արմեն Անտոնյան	Մեղրի / Ագարակի վարչական ղեկավար

Գարեգին Գաբրիելյան	Քաջարանի համայնքապետարան, Բնապահպանության, գյուղատնտեսության, տնտեսական զարգացման ծրագրերի բաժնի պետ
Լիա Աբելյան	Քաջարանի համայնքապետարան, Ֆինանսատնտեսական, եկամուտների հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ
Կարինե Օվչյան	Քաջարանի համայնքապետարան
Էրիկ Նուրիջանյան	Կապանի համայնքապետարանի տնտեսական զարգացման և արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ
Սիրաս Օհանյան	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ, բնապահպանության բաժնի պետ
Կամո Զարոյան	Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար (Կուտական բնակավայրի պատասխանատու)
Սեյրան Գրիգորյան	Ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ (Կախակն բնակավայրի պատասխանատու)
Արտակ Հունանյան	Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության եվ բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետի (Տրետուք բնակավայրի պատասխանատու)
Սևակ Խաչատրյան	Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի վարչական ղեկավար
Սեդա Բաղդասարյան	ՀՀ Կոտայքի մարզպետարան ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
Իշխան Եղիազարյան	Ծաղկաձորի համայնքապետարան, Առաջատար մասնագետ (Մեղրաձոր, Արտավազ, Մարմարիկ, Աղավնաձոր)

Արձանագրող՝ Հասմիկ Մանուկյան

<u>Աշխատաժողովի մասնակիցները քննարկեցին հետևյալ օրակարգային հարցերը.</u>

1. ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացման համատեքստում ռոյալթիից մասհանումների գործընթացի, համայնքային ծրագրերի իրականացման թափանցիկության և հաշվետվողականության ապահովման պահանջների կատարումը,
2. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում համայնքային մասհանումների մասով կատարված լրացումները,

3. Ռոյալթիների գումարից ՀՀ 2024թ. պետական բյուջեով ազդակիր բնակավայրերի և համայնքների բյուջեներին հատկացվող համայնքային մասհանումների ընդհանուր գումարի հաշվարկը և դրա հանրային հասանելիությունը,
4. Համայնքային մասհանումների ծախսման ծրագրերի կազմումը և համաձայնեցումը տարածքային բնագավառի լիազոր մարմնի հետ,
5. Համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները,
6. Համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությունների կազմումը, այդ համատեքստում ԱՃԹՆ-ի թափանցիկության և հաշվետվողականության պահանջների ապահովումը,
7. Ազդակիր բնակավայրերի ցանկի սահմանումը,
8. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի շրջանակներում իրականացվող գործընթացները:
9. Դասընթաց-աշխատաժողովի եզրափակիչ մասում մասնակիցները ստացված տեղեկատվության հիման վրա իրականացրեցին թիմային աշխատանք՝ ըստ համայքների բաժանված խմբերը կազմեցին ծրագրերի նախագծեր և ներկայացրեցին մասնակիցներին՝ ընդհանուր քննարկման համար:

<u>Քննարկված հարցերի արդյունքներով արձանագրվել է հետևյալը.</u>

Ռոյալթիներից համայնքներին մասհանումների վերաբերյալ քննարկումների արդյունքում վեր հանվեցին մի շարք իրավական և գործընթացային հարցեր, որոնք անհրաժեշտ է քննարկել պատասխանատու լիազոր մարմինների հետ և առաջարկել լուծումներ: Արձանագրված խնդիրներն են.

1. Գործող կարգավորումներով՝ համայնքին (ազդակիր բնակավայրին) ռոյալթիներից մասհանված գումարը կամ դրա մասը հաշվետու տարում չօգտագործվելու դեպքում տնտեսված գումարը պետք է փոխանցվի ազատ մնացորդի հաշվին, որը հաջորդող տարում հնարավոր չի լինի տեղափոխել ֆոնդային բյուջե, ուստի հնարավոր չի լինի օրենքով սահմանված կարգով դրա օգտագործումը հաշվետու տարվան հաջորդող տարում:
2. Համայնքներին սոցիալ-տնտեսական ծրագրեր մշակելու և ներկայացնելու համար ողջամիտ ժամանակ տրամադրելու նպատակով յուրաքանչյուր տարվա ազդակիր բնակավայրերի ցանկի և դրանց օգտին բաշխվող գումարների չափի հրապարակման և համայնքներին ծանուցման ժամկետը (ընդ որում՝ հնարավորինս տարեսկզբին մոտ) հարկավոր է սահմանել և ամրագրել իրավական ակտով, մասնավորապես, անհրաժեշտ է քննարկել հարցը «Բյուջետային գործընթացն սկսելու մասին» վարչապետի որոշմամբ

կարգավորելու հնարավորությունը: *(Ըստ ՏԿԵՆ-ի՝ 2024թ. համար բաշխվող գումարների չափը կծանուցվի ոչ ուշ քան 2023թ. մայիսի 31-ը:)*

3. Ազդակիր բնակավայրերի ցանկի սահմանման նպատակով իրականացվող գործընթացը պետք է հստակեցնել, քանի որ ըստ ընթացիկ տարվա պրակտիկայի՝ դրանց ցանկը տրամադրվում է մարզպետարանների կողմից՝ ի պատասխան ՏԿԵՆ-ի գրության: Լեռնահատկացման ակտը, որը հանդիսանում է մասհանում ստացող համայնքների (ազդակիր բնակավայրերի) որոշման հիմքը, հաստատվում է լիազոր մարմնի կողմից որպես ընդերքօգտագործման իրավունքի փաստաթուղթ: ՏԿԵՆ-ի ներկայացմամբ՝ քանի որ բնակավայրերը օրենսդրությամբ սահմանված վարչական սահմաններ չունեն, առաջանում են դժվարություններ ազդակիր բնակավայրերի որոշման հարցում, իսկ մարզպետարանները և համայքներն այդ հարցում ավելի տեղեկացված են: Քննարկումների արդյունքում սակայն պարզ դարձավ, որ, ի պատասխան ՏԿԵ նախարարի գրության, մարզպետարանների կողմից ներկայացված համայնքների (ազդակիր բնակավայրերի) ցանկում լրացուցիչ փոփոխություն կամ լրացում կատարելու վերաբերյալ մարզպետարանի կողմից ներկայացվող հնարավոր առաջարկությունների (ի լրումն գրությունների) հետևանքով դանդաղում է ըստ բնակավայրերի բաշխված գումարների վերաբերյալ ծանուցումը ցանկի համայնքներին:

4. Անհրաժեշտ է քննարկել ՀՀ կառավարության 01.09.2022թ. «Համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները հաստատելու մասին» թիվ 1370-Ն որոշման 2-րդ կետից «ըստ հերթականության» բառերը հանելու հարցը, քանի որ, ելնելով համայնքի առաջնահերթություններից և զարգացման ծրագրից, համայնքի առաջնահերթ ուղղությունների հերթականությունները կարող են օբյեկտիվորեն տարբերվել:

5. ՀՀ կառավարության 04.08.2022թ. թիվ 1198-Ն որոշմամբ հաստատված ծրագրերի հաշվետվությունների ձևաչափի «Ծրագիրն իրականացնողները և աջակցողները» կետում նախատեսված է «ծրագրի իրականացման նպատակով հավելյալ ֆինանսական միջոցներ տրամադրող անձ»-ի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու պահանջ, մինչդեռ ՀՀ կառավարության 01.09.2022թ. «Համայնքային մասհանումների ծախսման ծրագիրը կամ ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը սահմանելու մասին» թիվ 1358-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի 4-րդ ենթակետով ծրագիրը մերժվում է, երբ ծրագրով նախատեսվող միջոցառումների ֆինանսավորման ծավալների հանրագումարը գերազանցում է տվյալ տարվա բյուջեով ծրագրի իրականացման համար համայնքին տրամադրված համայնքային մասհանումների չափը:

6. Ծրագրերի մերժման նախորդ կետում նշված հիմքի նպատակահարմարությունը քննարկման կարիք ունի, քանի որ, բացառությամբ պետական բյուջեից համաֆինանսավորման, օրենքով չարգելված այլ աղբյուրներից համաֆինանսավորումը կարող է հնարավոր դարձնել ավելի լայնածավալ ծրագրերի իրականացումը:

7. Հարկավոր է հստակեցնել, որ ազդակիր համայնքները իրենց կողմից մշակված ծրագրերը թղթային կամ էլեկտրոնային եղանակով ուղղակի ներկայացնում են ՏԿԵՆ, առանց մարզպետարանի միջնորդության: ՏԿԵՆ-ի ներկայացմամբ և համաձայն օրենսդրության՝ ՏԿԵՆ-ից սահմանված ժամկետում պատասխան չստանալը համարվում է համաձայնություն:
8. Հարկավոր է հստակեցնել, թե ինչպես է կատարվում ռոյալթիի հաշվարկը ներքին իրացման ժամանակ և ո՞ր ընկերությունն է համարվում ռոյալթի վճարող, ըստ այդմ, ո՞ր ընկերության համայնքն (ազդակիր բնակավայրն) է համարվում մասհանում ստացող:
9. Համայնքների ներկայացուցիչների առաջարկությամբ՝ անհրաժեշտ է քննարկել մասհանումների միջոցիների ուղղումը այլ՝ ոչ կապիտալ ծրագրերի իրականացմանը, (օրինակ, ֆիզիկական անձանց կրթության կամ մասնագիտական վերապատրաստման ծրագրերի իրականացում), որը հնարավոր չէ իրականացնել, երբ մասհանումները ուղղվում են համայնքների ֆոնդային բյուջեներ: Միևնույն ժամանակ պետք է բացառել մասհանումների միջոցներից համայնքային ադմինիստրատիվ ծախսերի իրականացումը: